**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ**
**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՊԱՌԻԿ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

Ուժի մեջ է 15.05.2020թ-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ծառայության ամբողջական պայմանները՝

ameriabank.am | 010 56 11 11

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Կրեդիտի նպատակ՝
Ապառիկ ֆինանսավորման նպատակը՝ ֆիզիկական անձ հաճախորդներին ապրանքի կամ ծառայության ձեռքբերման համար ապառիկ ֆինանսավորման տրամադրում:

**Գործում են ապրանքի ապառիկ ֆինանսավորման հետևյալ հիմնական պայմանները.**

| | | |
|---|---|---|
| Հաճախորդի անձնական տվյալներ | Հաճախորդի տարիք | 21-65 |
| | Հաճախորդ | ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ |
| Ծառայության պայմաններ | Ֆինանսավորման արժույթ | ՀՀ դրամ |
| | ֆինանսավորման սահմանաչափ | 50,000-3,000,000 |
| | Ֆինանսավորման ժամկետ (ամիս) | 6-60 |
| | Տարեկան անվանական տոկոսադրույք | 21,5% |
| | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 0-24% |
| | Հաշվի ամսական սպասարկման վճար | Չի կիրառվում |
| Պարտքի մարման եղանակներ | Մարման եղանակ | Տոկոսադրույքի կիրառման դեպքում անուիտետային ՝ պարտքի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ,<br>Հավասարաչափ մարումների գրաֆիկ վարձավճարի կիրառման դեպքում՝պարտքի գումարը և վարձավճարը վճարվում են հավասարաչափ ամսական պարբերականույթամբ |

| | | |
|---|---|---|
| Ապահովվածությո ւն | Գրավադրվող գույքի նկարագրություն | Գրավի առարկա հանդիսանում է ձեռքբերվող ապրանքը |
| | Պարտք/գրավ հարաբերակցության առավելագույն սահմանաչափ | 100% |
| Ծառայության, տոկոսագումարների և այլ վճարների կատարման դիմաց միջնորդավճար | Անկանխիկ եղանակով, ինչպես նաև Ամերիաբանկի սարքավորումների / վճարային տերմինալներ, ՖԳԻԱՍներ/ միջոցով կատարելու դեպքում | 0 |
| | Այլ ՖԳԻԱՍների/վճարայ ին տերմինալների միջոցով | Ըստ համապատասխան ՖԳԻԱՍ/վճարային տերմինալը սպասարկող կազմակերպության կողմից սահմանված սակագների` https://ameriabank.am/ |
| | Բանկում՝ կանխիկ եղանակով | Ըստ Բանկի կողմից ֆիզիկական անձ հաճախորդների համար սահմանված սակագների https://ameriabank.am |
| Տույժեր և տուգանքներ | Տույժեր ժամկետանց մայր գումարի և տոկոսագումարի նկատմամբ | Պայմանագրով սահմանված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Հաճախորդը Բանկին վճարում է տույժ` կետանցի յուրաքանչյուր օրվա համար` ժամկետանց գումարի /կամ Ժամկետանց տոկոսագումարի 0.13 %-ի չափով Ֆինանսավորման գումարի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն գանձվում |

**Գործում են ծառայությունների մատուցման ապառիկ ֆինանսավորման հետևյալ հիմնական պայմանները՝**

| | | |
|---|---|---|
| Հաճախորդի անձնական տվյալներ | Հաճախորդի տարիք | 21-65 |
| | Հաճախորդ | ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձինք |
| Ծառայության պայմաններ | Ֆինանսավորման արժույթ | ՀՀ դրամ |
| | ֆինանսավորման սահմանաչափ | 100,000-1,500,000 |
| | Ֆինանսավորման ժամկետ (ամիս) | 6-24 |
| | Տարեկան անվանական տոկոսադրույք | 18.5-21.5% |
| | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 0-24% |
| | Հաշվի ամսական սպասարկման վճար | Չի կիրառվում |
| Պարտքի մարման եղանակներ | Մարման եղանակ | Տոկոսադրույքի կիրառման դեպքում անուիտետային ` պարտքի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ, Հավասարաչափ մարումների գրաֆիկ վարձավճարի կիրառման դեպքում՝պարտքի գումարը և վարձավճարը վճարվում են հավասարաչափ ամսական պարբերականույթամբ |
| Ապահովվածությու ն | Գրավադրվող գույքի նկարագրություն | Առկա չէ |
| | Պարտք/գրավ հարաբերակցության առավելագույն սահմանաչափ | Առկա չէ |

| | | |
|---|---|---|
| Ծառայության, տոկոսագումարների և այլ վճարների կատարման եղանակը և միջոցները | Անկանխիկ եղանակով, ինչպես նաև Ամերիաբանկի սարքավորումների / վճարային տերմինալներ, ՖԳԻԱՍներ/ միջոցով կատարելու դեպքում | 0 |
| | Այլ ՖԳԻԱՍների/վճարային տերմինալների միջոցով | Ըստ համապատասխան ՖԳԻԱՍ/վճարային տերմինալը սպասարկող կազմակերպության կողմից սահմանված սակագների` https://ameriabank.am/ |
| | Բանկում՝ կանխիկ եղանակով | Ըստ Բանկի կողմից ֆիզիկական անձ հաճախորդների համար սահմանված սակագների https://ameriabank.am |
| Տույժեր և տուգանքներ | Տույժեր ժամկետանց մայր գումարի և տոկոսագումարի նկատմամբ | Պայմանագրով սահմանված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Հաճախորդը Բանկին վճարում է տույժ` կետանցի յուրաքանչյուր օրվա համար` ժամկետանց գումարի /կամ Ժամկետանց տոկոսագումարի 0.13 %-ի չափով<br>Ֆինանսավորման գումարի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն գանձվում |

**Գործում են արևային կայանների և ջրատաքացուցիչների ապառիկ ֆինանսավորման հետևյալ հիմնական պայմանները.**

| | | |
|---|---|---|
| Հաճախորդի նկատմամբ պահանջներ | Հաճախորդի տարիք | 21-65 |
| | Հաճախորդ | ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձինք |
| Ծառայության պայմաններ | Ֆինանսավորման արժույթ | ՀՀ դրամ |
| | ֆինանսավորման սահմանաչափ | 200,000-5,000,000 |
| | Ֆինանսավորման ժամկետ (ամիս) | 6-108 |
| | Տարեկան անվանական տոկոսադրույք | 9.5-15.5% |
| | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 0-17% |
| | Հաշվի ամսական սպասարկման վճար | Չի կիրառվում |
| Պարտքի մարման եղանակներ | Մարման եղանակ | Տոկոսադրույքի կիրառման դեպքում անուիտետային ՝ պարտքի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ, Հավասարաչափ մարումների գրաֆիկ վարձավճարի կիրառման դեպքում՝պարտքի գումարը և վարձավճարը վճարվում են հավասարաչափ ամսական պարբերականույթամբ |
| Ապահովվածություն | Գրավադրվող գույքի նկարագրություն | Գրավի առարկա հանդիսանում է ձեռքբերվող ապրանքը |
| | Պարտք/գրավ հարաբերակցության առավելագույն սահմանաչափ | 100% |
| Ծառայության, տոկոս | Անկանխիկ եղանակով, ինչպես նաև Ամերիաբանկի սարքավորումների / վճարային տերմինալներ, ՖԳԻԱՍՆեր/ միջոցով կատարելու դեպքում | 0 |

| | | |
|---|---|---|
| | Այլ ՖԳՀԱՍների/վճարայ ին տերմինալների միջոցով | Ըստ համապատասխան ՖԳՀԱՍ/վճարային տերմինալը սպասարկող կազմակերպության կողմից սահմանված սակագների` https://ameriabank.am/ |
| | Բանկում` կանխիկ եղանակով | Ըստ Բանկի կողմից ֆիզիկական անձ հաճախորդների համար սահմանված սակագների` https://ameriabank.am/ |
| Տույժեր և տուգանքներ | Տույժեր ժամկետանց մայր գումարի և տոկոսագումարի նկատմամբ | Պայմանագրով սահմանված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Հաճախորդը Բանկին վճարում է տույժ` կետանցի յուրաքանչյուր օրվա համար` ժամկետանց գումարի /կամ ժամկետանց տոկոսագումարի 0.13 %-ի չափով<br>Ֆինանսավորման գումարի վաղաժամկետ մարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն գանձվում |

**Ֆինանսավորման սպասարկման սակագին**

| Նպատակ | Սակագին |
|---|---|
| Ֆինանսավորման պայմանների փոփոխություն | 15,000 ՀՀ դրամ |
| Ֆինանսավորման մարման օրվա փոփոխություն | 5,000 ՀՀ դրամ |

Սակագինը կիրառվում է հաճախորդի նախաձեռնությամբ փոփոխությունների իրականացման դեպքում: Եթե 1 փոփոխության արդյունքում գանձման ենթակա է մի քանի սակագին, ապա գանձվում է կիրառելի ամենաբարձր սակագինը` 1 անգամ:

**Պահանջվող փաստաթղթեր**

| | |
|---|---|
| Ապառիկ ֆինանսավորման հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր | Անձը հաստատող փաստաթղթեր (բնօրինակ) `<br>ՀՀ ոչ կենսաչափական անձնագիր, նույնականացման քարտ, հանրային ծառայությունների համարանիշ/սոցիալական քարտ<br>Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր: |

**Քաղվածքներ**

Վարկային հաշիվների քաղվածքը Բանկը տրամադրում է հաճախորդին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և/կամ Հաճախորդի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով: Քաղվածքները տրամադրվում են փոստային հասցեով, էլեկտրոնային փոստով« Ինտերնետ-Բանկ համակարգի միջոցով, կամ առձեռն` Բանկի ցանկացած մասնաճյուղում:

**Ուշադրություն**
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄՆ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

| Քաղվածքների, տեղեկատվական նյութերի և կրկնօրինակների տրամադրման միջնորդավճար | սակագին |
|---|---|
| Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում | անվճար |
| 1 տարուց ավել վաղեմություն ունեցող քաղվածքի, քաղվածքի կրկնօրինակի տրամադրում կամ էլեկտրոնային ձևով պահվող այլ փաստաթղթի տրամադրում | 5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր հաշվի յուրաքանչյուր տարվա քաղվածքի համար |
| Թղթային ձևով պահվող կամ 1 տարուց ավել վաղեմություն ունեցող էլեկտրոնային եղանակով պահվող փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում | 5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ յուրաքանչյուր փաստաթղթի համար |
| Տեղեկանքների տրամադրում | |
| 3 ամիս և ավել հաշվետեր հաճախորդներին 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ | 3,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |
| Մինչև 3 ամսվա հաճախորդներին | 5,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ |

**Ուշադրություն.**
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ԲԱՆԿԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ԿՐԵԴԻՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

**Ուշադրություն.**
ԿՐԵԴԻՏԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՍԱՀՄԱՆԱԾ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ:

**Ուշադրություն.**
ԿՐԵԴԻՏԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԿՐԵԴԻՏԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԿՐԵԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ԿՐԵԴԻՏԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ: ԿՐԵԴԻՏԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՕՐԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ՝ ԿՐԵԴԻՏԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺՈՒՅԹՈՎ: ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ 365 ՕՐ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՏԱՐԻՆ:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ԿՐԵԴԻՏԸ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ և ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.**

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

.

Տոկոսագումարների մեծությունը որոշվում է տարեկան անվանական տոկոսադրույքի մեծության և Կրեդիտի մարման եղանակի հիման վրա:

**Կրեդիտի և տոկոսագումարների մարումները իրականացվում են անուիտետային մարման եղանակով և ամսական վճարման գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.**

**R= P x r / (1–1/(1 +r)n)**, որտեղ՝
R - Վարկի ամսական վճարումն է:
P - Վարկի գումարն է:
n - Վարկի ամբողջ ժամանակահատվածի համար վարկային վճարումների ընդհանուր թիվն է (ամիսների քանակը):
r – Վարկի ամսական տոկոսադրույքը, որը հավասար է Վարկի տրամադրման պահին Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքի 1/12 մասին:

- անուիտետային

**Ուշադրություն.**
ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԵԼՈՒ ԵՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ, ԵՎ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՁԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ :

**Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝**

1. Տույժ/տուգանքներ
2. Տոկոսագումարներ
3. Մայր գումար

ՁԵՐ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ:

Կրեդիտի վաղաժամկետ մարում՝
Ապառիկ ֆինանսավորման դեպքում հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

**Տոկոսադրույքի փոփոխման կարգը.**
ԲԱՆԿԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՑԱՆԿԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿ ՓՈՓՈԽԵԼ ՏՈԿՈՍԻ ՉԱՓԸ՝ ԿԱԽՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ, ԲԱՆԿԻ ՆԵՐԳՐԱՎԱԾ և/ԿԱՄ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻՑ, և/ԿԱՄ ԵԹԵ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԵՆ ԴԱՐՁԵԼ ԿՐԵԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ: ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅԴ ՄԱՍԻՆ ՆԱԽՕՐՈՔ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ /ԱՌՆՎԱԶՆ 7 ՕՐ ԱՌԱՋ/ և ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԾԱՆՈՒՑԵԼ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ, ԻՆՉԸ ՀԻՄՔ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԵՋ ՆՇՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՓՈՓՈԽՎԱԾ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԵԹԵ ՎԱՐԿԱՌՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԷ ՓՈՓՈԽՎԱԾ ՏՈԿՈՍԻ ՀԵՏ, ԱՊԱ ՆԱ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ՝ ԿԱՏԱՐԵԼՈՎ ԲԱՆԿԻ ՀԱՆԴԵՊ ՏՎՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ԻՐ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄԲՈՂՋ ԾԱՎԱԼՈՎ:
ՍՊԱՌՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ԼՈՒԾԵԼՈՒ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԵԹԵ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ ԺԱՄԿԵՏ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ (ՄՏԱԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ): ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԿՐԵԴԻՏԻ ԳՈՒՄԱՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՈՂԻՆ ՎՃԱՐԵԼ ՏՈԿՈՍՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ: ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՑ ՊԱՀԱՆՋՎԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ:

**Հաճախորդի Կրեդիտի տրամադրման համար դրական գործոններ կարող են հանդիսանալ`**

- Բանկի և հաճախորդի միջև ձևավորված հարաբերությունների պատմությունը
- Հաճախորդի կողմից ստացվող եկամուտը
- Դրական վարկային պատմությունը
- և այլն

**Կրեդիտի մերժման գործոնները`**

- Վարկառուի կողմից ներկայացված տվյալները /փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը/ անարժանահավատ են կամ ոչ ամբողջական:
- Վարկառուի եկամուտներն անբավարար են պարտավորությունների մարման համար
- Վարկառուն ունի վատ վարկային պատմություն, ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ /այդ թվում` երրորդ անձանց հանդեպ/
- և այլն

**Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը`**

Ապառիկ ֆինանսավորում ստանալու համար Հաճախորդը Բանկ չի այցելում: Ֆինանսավորման ստացման համար Հաճախորդը դիմում է Բանկի հետ համագործակցող Ընկերությանը, որից ցանկանում է ձեռք բերել համապատասխան ապրանքը: Ֆինանսավորման գործընթացը կատարվում և ավարտին է հասցվում ինքնաշխատ ծրագրի միջոցով, որի շրջանակում Հաճախորդի վարկունակության գնահատումը և ֆինանսավորման տրամադրման վերաբերյալ Բանկի որոշումը կայացվում է ծրագրային` ինքնաշխատ հաշվարկով` Սքորինգի արդյունքի հիման վրա:

Բանկի կողմից ապառիկ ֆինանսավորման վերաբերյալ որոշման կայացումից հետո, եթե հաճախորդը.

- հայտնում է կրեդիտը ստանալու մասին իր դրական որոշման վերաբերյալ դրա հաստատման մասին տեղեկանալու օրվանից 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում, ապա Կրեդիտը տրամադրվում է :

**ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ` ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»**